

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 28

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

14.11. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյան - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Մ. Սարգսյանը, Կ. Ադամյանը, Վ. Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ապլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Ֆրանսիա կատարած այցի մասին
/Ա. Նալբանդյան/
2. Համայնքներում բյուջետային գործընթացների, հարկերի հավաքագրման և հնգամյա ծրագրերի իրազեկման մասին
/Ջեկ. Ա.Դարբինյան/
/ Ջեկ. Հ. Թադևոսյան/
/ Ջեկ. Տ. Բադոյան/
3. Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին
/ Ջեկ. Ն. Սարգսյան/
4. ա/Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
բ/Համայնքներում բյուջեների կազմման ծրագրերի ընթացքի մասին
/ Ջեկ. Հ. Պապոյան/
5. 2017-2025թ.թ. ռազմավարական ծրագրի կատարված աշխատանքների մասին
/ Ջեկ. Հ. Մկրտչյան/
6. Լոռու մարզպետարանի գործունեությունը առավել թափանցիկ դարձնելու նպատակով միջոցառումների մասին
/ Ջեկ. Վ.Դոխոյան/
7. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ. Ասլանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին՝

Կազմակերպել և անցկացնել աշխատանքային խորհրդակցություն Վանաձորի Տեխնոկենտրոնի, Վանաձորի պետական համալսարանի և Հայաստանի պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ղեկավարների հետ՝ Լոռու մարզի պատվիրակության Ֆրանսիա կատարած այցի արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների քննարկման և առաջարկությունների ներկայացման նպատակով:

/Ժամկետ՝ 1 օր/

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Կազմակերպել և սույն թվականի նոյեմբերի 15-ին անցկացնել աշխատանքային խորհրդակցություն մարզի քաղաքային և 3 խոշոր գյուղական համայնքների ղեկավարների մասնակցությամբ՝ համայնքների բյուջեների կազմման գործընթացին վերաբերվող հարցերով բյուջետային գործընթացը առավել թափանցիկ, հրապարակային և մասնակցային դարձնելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ապահովել ստորաբաժանումների աշխատողների և ըստ ոլորտների տնտեսվարող կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը սույն թվականի նոյեմբերի 19-ին անցկացվող «Մարաթոն-դրամահավաքին» :

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել սահմանված ժամկետներում ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման ուղղությամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Վ. Դոխոյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Լոռու մարզպետարանի և ստորաբաժանումների գործունեությունը առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու ուղղությամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Մ. Հովհաննիսյան

Հեռ. 0322 /2-31-99/